



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 հունիսի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական, ճարտարապետության և քաղաքաշինության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը, իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ Եվա Թովմասյանը ներկայացրել է դիմում ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 04.06.2019թ. արձանագրության համաձայն՝ Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Ասքանազ Աբրահամյանին:

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյանը և ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյանը:

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը:

1) Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

2) Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3) «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4) Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5) Գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1) Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2) Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

3) Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **5** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1) Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2) Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

3) Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4) Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

5) Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

«Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի **N10**-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի հոկտեմբերի **29**-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների,

խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման.

1. N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բաժիններ՝

1) Առաջին և գորակոչային հարցերի կազմակերպման բաժին

2) Անձնակազմի կառավարման բաժին

3) Զորահավաքային բաժին

4) Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

5) Ներքին աուդիտի բաժին

6) Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

7) Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին

8) Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին»:

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ»-ի.

ա. 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) Առևտրի և սպասարկումների բաժին»,

բ. բաժինը լրացնել նոր 1.1 ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ «1.1) Գովազդի բաժին»:

2. N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1) Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N47-Ն որոշմամբ հաստատված NN 2,3,6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-4 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Գայանե Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

4. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1) Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանը:

Ելույթների վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ **Հ. Սարգսյանը**:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ **Լևոն Հովհաննիսյանը** տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի **N47**-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1) Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու **ԼՈՒՅՍ** խմբակցության ղեկավար

2) Թեմինա Վարդանյան- Երևանի ավագանու **ԼՈՒՅՍ** խմբակցության անդամ

3) Արմեն Ներսիսյան-Երևանի ավագանու **ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ** խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու **ԼՈՒՅՍ** խմբակցության ղեկավար **Դ. Խաժակյանը**:

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ **Հ. Մարությանը**:

ՈՐՈՇՎԵՑ – **1.** Երևան քաղաքի ավագանու **2018** թվականի դեկտեմբերի **25**-ի «Երևան քաղաքի **2019** թվականի բյուջեի մասին» **N47**-Ն որոշմամբ հաստատված **NN 1,2,3,6** և **7** հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար **NN 1-5** հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **41** անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ **41**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

5. ԼՍԵՑԻՆ - Գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ **Մհեր Աղաբեկյան**:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ **Սաթենիկ Մկրտչյանը** տեղեկացրեց, որ «Գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին տեղադրելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1) Կարինե Բաղդասարյան- Երևանի ավագանու **ԻՍ ՔԱՅԼԸ** խմբակցության անդամ

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:
ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն գեներալ Մանուել Բելգրանոյի կիսանդրին Երևան քաղաքի Արգենտինայի հրապարակում տեղադրելու համար:
ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու **43** անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ` **42**, դեմ` **0**, ձեռնպահ` **1**
Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ